ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 0236 6-13-18 noramarghamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 35

ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.ավագանին որոշեց՝

Հաստատել համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 12 նիստի օրակարգը՝

1.Համայնքի 2017 թվականի բյուջեում փոփոխությունների կատարելու մասին.

2.Աղբահանության վճար վճարողների հաշվառման,աղբահանության վճարի հաշվարկման,ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը հաստատելու մասին

3.Նորամարգ համայնքի 2018թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին.

4.Համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին

5.Համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը ,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՔՈ
2. ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
4. ԹՈՐՈՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ
5. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԳՐԻՇԱ
6. ԿՅԱԶՈՒՄՅԱՆ ՍԵՐԺ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ

Համայնքի ղեկավար՝ ՍԱՐԳԻՍ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 0236 6-13-18 noramarghamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 36-Ն

ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի պահանջներով.ավագանին որոշում է.

Հաստատել Նորամարգ գյուղական համայնքի 2017 թվականի վարչական ծախսային մասում համայնքի ղեկավարի կողմից առաջարկված հետևյալ փոփոխությունները.

1.2017 թվականի վարչական բյուջեի ծախսային մասի 11-1-2 ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ հատվածի 4891 հոդվածը պակասացնել 120,0 հազ. դրամ ավելացնել 120,.0հազ, դրամ.

2.2017 թվականի վարչական բյուջեի ծախսային մասի 1-6-1 Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ հատվածի 4211 հոդվածը ավելացնել 40,0 հազ.դրամով.բանկային ծառայություններ ձեռք բերելու նպատակով.

3.2017 թվականի վարչական բյուջեի ծախսային մասի 1-6-1 Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ հատվածի 4239 հոդվածը ավելացնել 40,0 հազ.դրամով. համերգային տոմսեր ձեռք բերելու նպատակով.

4.2017 թվականի վարչական բյուջեի ծախսային մասի 1-6-1 Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ հատվածի 4241 հոդվածը ավելացնել 40,0 հազ.դրամով. համայնքային սեփականություն համարվող պահուստային ֆոնդի հողերի չափագրման ծառայություններ ձեռք բերելու նպատակով.

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՔՈ
2. ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
4. ԹՈՐՈՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ
5. ՇԱՏՈՒՐՅԱՆ ԳՐԻՇԱ
6. ԿՅԱԶՈՒՄՅԱՆ ՍԵՐԺ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար՝ ՍԱՐԳԻՍ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 0236 6-13-18 noramarghamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 37-Ն

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ,ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ,ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 20-րդ և ՝Աղբահանության և սանիտարական մաքրման մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով.

Ավագանին որոշում է՝

Հաստատել աղբահանության վճար վճարողների հաշվառման,աղբահանության վճարի հաշվարկման ,ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը համաձայն հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՔՈ
2. ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
4. ԹՈՐՈՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ
5. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԳՐԻՇԱ
6. ԿՅԱԶՈՒՄՅԱՆ ՍԵՐԺ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար՝ ՄԱՐԳԻՍ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 0236 6-13-18 noramarghamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 38-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների >> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով,12-րդ,14-րդ հոդվածներով և "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 18 կետի պահանջներով.ավագանին որոշում է՝

1.Սահմանել Նորամարգ համայնքի 2018 թվականի հետևյալ հետևյալ տեղական տուրքերը.կիրառել 0.5 գործակից

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ *յոթ հազար հինգ հարյուր* դրամ.
բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ *տասնհինգ հազար* դրամ.
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ *քսան հինգ հազար* դրամ.
-1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ *քսան հինգ հազար* դրամ.
-3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ *հիսուն հազար* դրամ.
գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝
- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ *մեկ հազար հինգ հարյուր* դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ *երկու հազար հինգ հարյուր* դրամ:
2) համայնքի վարչական տարածքում գոյությունունեցողշենքերիևշինություններիվերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացմաննբարեկարգմանաշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ *մեկ հազար հինգ հարյուր* դրամ.
բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3)Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար՝ *երկու հազար հինգ հարյուր* դրամ.

4)համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ *հարյուր հազար* դրամ.

6)համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ *երեսուն հազար* դրամ.

8)համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ *քսանհինգ հազար* դրամ.

9)համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *երկու հազար հինգ հարյուր* դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *վեց հազար* դրամ.
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *յոթ հազար* դրամ.
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *տաս հազար հինգ հարյուր* դրամ.
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *տասներեք հազար* դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *քսաներեք հազար հարյուր* դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *երկու հազար հինգ հարյուր* դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *վեց հազար* դրամ.
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *յոթ հազար* դրամ.
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *տաս հազար հինգ հարյուր* դրամ.
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *տասներեք հազար* դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *քսաներեք հազար հարյուր* դրամ.

10)իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ *հարյուր յոթանասունհինգ դրամ* մեկ քառակուսի մետրի համար.

11)համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար.

ա. առևտրի օբյեկտների համար՝ *հինգ հազար* դրամ.
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ *տաս երկու հազար հինգ հարյուր* դրամ.
գ. բաղնիքների (սաունաների) համար՝ *հարյուր հազար* դրամ.
դ. խաղատների համար՝ *երկու հարյուր հիսուն հազար* դրամ.
ե. շահումով խաղերի համար՝ *մեկ հարյուր քսանհինգ հազար* դրամ.

գ. վիճակախաղերի համար՝ *հիսուն հազար* դրամ.

12)համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *երկու հազար վեց հարյուր* դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային 666 սննդի օբյեկտի համար՝ *երեք հազար* դրամ.
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *վեց հազար* դրամ.
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *ութ հազար* դրամ.
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *տաս երկու հազար* դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *տասնվեց* հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *հինգ հարյուր* դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *մեկ հազար* դրամ.
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *երկու հազար* դրամ.
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *չորս հազար* դրամ.
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *յոթ հազար հինգ հարյուր* դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *տաս երկու հազար* դրամ.

14)ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ *մեկ հազար* դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ *մեկ հազար յոթ հարյուր հիսուն* դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ *զրո* դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար *հինգ հարյուր* դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝համայնքի վարչական տարածքում այլարտաքինգովազդտեղադրելութույլտվությանհամարսահմանվածտուրքի 25 %-ի չափով.

զ.եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել նտարածելէ իրկազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլարտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով:

15)Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ *հիսուն հազար* դրամ.

16)համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ *հինգ հազար* դրամ.

17)համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ *երկու հարյուրհիսուն հազար*դրամ:

18) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ *մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար* դրամ.

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝*երկու միլիոն հինգ հարյուր հազար* դրամ.

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝*երեք միլիոն հինգ հարյուր հազար* դրամ.

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ *հինգ միլիոն* դրամ:

2,Նորամարգիամայնքում սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ *տասը հազար* դրամ,

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներնի իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդթվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ *տասը հազար*դրամ,

3ճարտարապետա շինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ *տասը հազար* դրամ,

4. համայնքի տնօրինության նօգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ *հինգ հազար* դրամ,

5. համայնքի կողմից կազմակերպվող մրցույթներին աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ *երեք հազար* դրամ:

6.տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար սահմանել՝

1) կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցողն (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական ----------50դրամ:

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա/ ըստ ծավալի՝ մեկ խորհանարդ մետր աղբի համար -----1000 դրամ կամ

բ/ըստ զանգվածի՝մեկ տոննա աղբի համար --- 3000 դրամ

3).շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել ----------500 դրամ:

4) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար փոխհատուցման վճար սահմանել՝ 1000 դրամ

7.Համայնքի ենթակայության մանկապարտեզի ,արտադպրոցական դաստիարակության հաստատությունների(երաժշտական,նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայությունից օգտվողների համար ծնողական վճար սահմանել՝ ամսական՝4000 /չորս հազար/ ՀՀ դրամ.

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՔՈ

2. ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ

4. ԹՈՐՈՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ

5. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԳՐԻՇԱ

6. ԿՅԱԶՈՒՄՅԱՆ ՍԵՐԺ

7. ՍԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար՝ ՍԱՐԳԻՍ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 0236 6-13-18 noramarghamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 39

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով ,համայնքի ավագանին որոշում է՝.

1.Համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը սահմանել 273000(երկու հարյուր յոթանասուներեք հազար) ՀՀ դրամ.2018 թվականի համար:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՔՈ
2. ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
4. ԹՈՐՈՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ
5. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԳՐԻՇԱ
6. ԿՅԱԶՈՒՄՅԱՆ ՍԵՐԺ
7. ՍԱՐՈՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար՝ ՍԱՐԳԻՍ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 0236 6-13-18 noramarghamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 40

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ,ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ /ԾԻԱԾԱՆ ՝ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ/ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ,ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՛՛Տեղական ինքնակառավարման մասին՛՛ Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և 20-րդ հոդվածով՝համայնքի ավագանին որոշում է.

1Հաստատել Նորամարգի համայնքապետարանի,համայնքային ոչ-առևտրային կազմակերպության /մսուր մանկապարտեզի/աշխատակազմերի կառուցվածքները,աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն **N1և N2 հավելվածների**

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՔՈ
2. ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
4. ԹՈՐՈՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ
5. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԳՐԻՇԱ
6. ԿՅԱԶՈՒՄՅԱՆ ՍԵՐԺ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար՝ ՍԱՐԳԻՍ ԳԱԼՍՏՅԱՆ